Տեղեկանք փոփոխվող հոդվածների մասին

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

(Կ-479[3]-13.02.2020-ԱՍ-011/0)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2018 թվականի փետրվարի 9-ի քաղաքացիական դատավարության օրենսգիրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 270-րդ հոդվածի 2-րդ մասում «համար» բառից հետո լրացնել «՝ առավելագույնը վեց ամիս ժամկետով:» բառերը:

Հոդված 2. Օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 270[1]-րդ և 270[2]-րդ հոդվածներով՝

«*Հոդված 270[1] . Քաղաքացուն հոգեբուժական կազմակերպություն ոչ հոժարակամ հոսպիտալացման ենթարկելու վերաբերյալ դատարանի վճիռը վերացնելը*

1. Քաղաքացուն հոգեբուժական հիվանդանոցային ոչ հոժարակամ բուժման ենթարկելու վերաբերյալ դատարանի վճռով սահմանված ժամկետից շուտ անձի ապաքինվելու դեպքում տվյալ քաղաքացու, նրա ընտանիքի անդամների, այն բժշկական կազմակերպության, որտեղ բուժվում է տվյալ քաղաքացին կամ ոչ հոժարակամ բուժում իրականացնող բժշկական կազմակերպության գտնվելու վայրի խնամակալության եւ հոգաբարձության մարմնի դիմումով, դատահոգեբուժական փորձաքննության համապատասխան եզրակացության հիման վրա, դատարանը վճիռ է կայացնում քաղաքացուն հոգեբուժական կազմակերպություն ոչ հոժարակամ հոսպիտալացման ենթարկելու վերաբերյալ վճիռը վերացնելու մասին:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դիմումը բավարարելու մասին դատարանի վճիռը հրապարակման պահից մտնում է օրինական ուժի մեջ:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դիմումները ներկայացվում են այն դատարան, որի կողմից նախկինում վճիռ է կայացվել քաղաքացուն հոգեբուժական հիվանդանոցային ոչ հոժարակամ բուժման ենթարկելու վերաբերյալ:

Հոդված 270[2]. Դատարանը սույն գլխով սահմանված կարգով քննում և լուծում է նաև «Հոգեբուժական օգնության մասին» օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դիմումները»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: